

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/1

9 նոյեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 09.10.2012թ-ի նիստում քննության է առնվել <Կրասկի Սեյսի> ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.09.2012թ. թիվ 1420885 վարչական ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.09.2012թ. թիվ 1420885 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է, որ սույն թվականի սեպտեմբերի 24-ին ժամը 12:15-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 8-րդ բաժնի աշխատակիցների կողմից արտաքին դիտում իրականացնելիս, տրանսպորտային միջոցների հետազոտման նպատակով, ք.Երևան, Բաֆֆու փողոցի <Ռաֆայել Տաթև> տոնավաճառին հարող տարածքում ՕՀՎ աշխատակիցները մոտեցան կայանած <Ֆորդ-Տրանզիտ> մակնիշի 28SS852 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենային: Պարզվել է, որ ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում էր Վանաձոր քաղաքի բնակիչ Արա Խարազյանին, որն էլ հանդիսանում էր մեքենայի վարորդը: Արա Խարազյանը տվել է գրավոր հայտարարություն այն մասին, որ մեքենան բեռնված է ավտոներկերով, լուծիչներով, ավտոյուղերով և ավտոմեքենայի համար անհրաժեշտ այլ աքսեսուարներով, ք.Երևան, Բաֆֆու փողոց 77/1 հասցեի ավտոներկերի խանութից, իսկ բեռնված ապրանքների համար իրեն որևէ ուղեկցող կամ այլ փաստաթուղթ չի տրվել և նշված ապրանքները պետք է տեղափոխեր ք.Վանաձոր ում Արթուրին: Փաստացի գննմամբ պարզվել է, որ ավտոմեքենայի բեռնախցում առկա էին հետևյալ ապրանքները՝ ներկ փչովի 30 հատ, ներկ փչովի շթի 30 հատ, յուղ <Յուկոյլ 10w40> 180 կգ, լուծիչ 171 կգ, ինքնակաշուն ժապավեն 108 կգ, մածիկ 372 կգ, նախաներկ 84 կգ, հղկաթուղթ 100 հատ, յուղ <Յուկոյլ 15w40> 420 կգ, ներկ փչովի 432 հատ, արգելակման հեղուկ 341 կգ, հակասառիչ հեղուկ 750 կգ:

Արդյունքում ՕՀՎ աշխատակիցների կողմից կազմվեց համապատասխան արձանագրություն ապրանքների քանակների և տեսականու վերաբերյալ: Այնուհետև ՕՀՎ աշխատակիցներն իրերի և փաստաթղթերի հետազոտման նպատակով այցելել են ք.Երևան, Բաֆֆու փողոց 77/1 հասցեում գտնվող <Կրասկի Սեյսի> ՍՊԸ գրասենյակ: Ընկերության տնօրեն Սեյրան Սիրեկանյանը ՕՀՎ աշխատակիցներին տրամադրել է 24.09.2012 թվականին ժամը 13:08-ին էլեկտրոնային եղանակով դուրս գրված թիվ Ա 1017433072 հարկային հաշիվը՝ <Ֆորդ Տրանզիտ> մակնիշի 28SS852 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենայի բեռնախցում բեռնված ապրանքների վերաբերյալ՝ ընդհանուր գումարով 4059633.57 դրամ արժեքով (ներառյալ ԱԱՀ):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի դրույթներով, ՕՀՎ 8-րդ բաժնի պետը, անփաստաթուղթ ապրանքներ տեղափոխելու, տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու համար, խախտման հիմք հանդիսացող գործարքի մասով ընդունել է վարչական ակտ, որով գանձման է առաջադրել տուգանք՝ առանց ուղեկցող փաստաթղթերով ապրանքների գնի 100%-ի չափով՝ գումարով 4059633.57 դրամ:

<Կրասկի Սեյսի> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

<Կրասկի Սեյսի> ՍՊԸ-ն զբաղվում է ներկերի, յուղերի, հակասառիչ հեղուկների ներմուծմամբ: Ս.թ. սեպտեմբերի 24-ին Վանաձորի բնակիչ Արա Խարազյանը եկել էր իրեն պատկանող 28SS852 պետհամարանիշի <Ֆորդ-Տրանզիտ> մեքենայով <Եգո-Արտ> ՍՊԸ պետվերով բեռնափոխադրում կատարելու համար: Նույն ժամանակ <Կրասկի Սեյսի> ՍՊԸ-ն զբաղված էր Թուրքիայի բեռի բեռնաթափմամբ և խառը լինելու պատճառով տեղի է ունեցել

թյուրիմացություն: Մասնավորապես, մինչ հաշվապահը դուրս կգրեր հաշիվ ապրանքագիրը, Վանաձորի բնակիչ Արա Խարազյանը չսպասելով ստանալ հաշիվ ապրանքագիրը հեռացել է խանութից, պատճառաբանելով, թե կինն ու երեխան իրեն են սպասում:

Նրան <Ռաֆայել-Տաթև> տոնավաճառի մոտ կանգնեցրել են ՕՀՎ 8-րդ բաժնի աշխատակիցները և համապատասխան փաստաթուղթ չունենալու համար <Կրասկի Սեյսի> ՍՊԸ-ի նկատմամբ կազմել են վարչական ակտ՝ գումարով 4059633.57 դրամ:

Քանի որ <Կրասկի Սեյսի> ՍՊԸ-ն պարտաճանաչ մուծում է իր բոլոր հարկերը, իսկ ակտի գումարը կարող է վատ անդրադառնալ ընկերության գործունեության վրա, ընկերությունը խնդրում է հնարավորության սահմաններում կատարել գումարի նվազեցում:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և խախտման փաստն արձանագրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՕՀՎ 8-րդ բաժնի աշխատակիցները նշեցին, որ 24.09.2012թ-ին ժամը 12:15-ին տրանսպորտային միջոցների հետազոտման նպատակով մոտեցել են ք.Երևան, Րաֆֆու փողոցի <Ռաֆայել Տաթև> տոնավաճառին հարող տարածքում կայանած <Ֆորդ-Տրանզիտ> մակնիշի 28SS852 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենային: Համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Վանաձոր քաղաքի բնակիչ Արա Խարազյանին, որը հանդիսանում է նաև մեքենայի վարորդը: Մեքենայի փաստացի գնմամբ պարզվել է, որ ավտոմեքենայի բեռնախցում առկա են ապրանքանյութական արժեքներ: Արա Խարազյանը տվել է գրավոր հայտարարություն այն մասին, որ մեքենայում առկա ապրանքները բեռնվել են ք.Երևան, Րաֆֆու փողոց 77/1 հասցեում գտնվող խանութից և բեռնված ապրանքների համար իրեն որևէ ուղեկցող կամ այլ փաստաթուղթ չի տրվել: ՕՀՎ աշխատակիցների կողմից կազմվել է համապատասխան արձանագրություն ապրանքների քանակների և տեսականու վերաբերյալ: Այնուհետև ՕՀՎ աշխատակիցներն իրերի և փաստաթղթերի հետազոտման նպատակով այցելել են ք.Երևան, Րաֆֆու փողոց 77/1 հասցեում գտնվող <Կրասկի Սեյսի> ՍՊԸ գրասենյակ: Ընկերության տնօրեն Սեյրան Սիրեկանյանը ՕՀՎ աշխատակիցներին տրամադրել է 24.09.2012թ. ժամը 13:24-ին էլեկտրոնային եղանակով դուրս գրված թիվ Ա1017433072 հարկային հաշիվը՝ <Ֆորդ Տրանզիտ> մակնիշի 28SS852 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենայի բեռնախցում բեռնված ապրանքների վերաբերյալ՝ ընդհանուր գումարով 4059633.57 դրամի:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն. <<Հարկ վճարողի կողմից սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող <<Հավելված 4>>-ով սահմանված կարգի խախտման՝ անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների (այսուհետ՝ ապրանքների) տեղափոխման կամ առաքման կամ առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու դեպքում խախտման հիմք հանդիսացող գործարքի կամ գործողության մասով գանձվում է տուգանք անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 50 տոկոսի չափով:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումը արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտման՝

1) կրկնական փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 100 տոկոսի չափով. ...

Սույն հոդվածի կիրառման իմաստով գործարքը կամ գործողությունը համարվում է խախտման հիմք, եթե հարկային մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում արձանագրվել է, որ՝

1) գործարքը կամ գործողությունը օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու պահին կատարվում է առանց սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող <<Հավելված 4>>-ով սահմանված վավերապայմաններին բավարարող ուղեկցող փաստաթղթերի կամ ...>:

Քննարկվող դեպքում <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված խախտումն արձանագրվել է կրկին անգամ, հետևապես վարչական ակտով տուգանքը կիրառվել է անփաստաթուղթ ապրանքների գնի 100% չափով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՕՀՎ 8-րդ բաժնի աշխատակիցները խախտումն արձանագրել են 24.09.2012թ-ին ժամը 12:15-ին, իսկ ապրանքների մատակարարման հարկային հաշիվը դուրս է գրվել խախտումն արձանագրվելուց հետո՝ նույն օրը ժամը 13:24-ին, Հանձնաժողովը գտնում է, որ վարչական ակտն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Վարչական ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ